ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Տ. ՄԱՂԱՔԻԱ ԱԲԵՂԱ ԱՄԻՐՅԱՆ

ՀԱԿՈԲ ԿԱՐՆԵՑՈՒ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Հակոբ քահանա Կարնեցու կենսագրությունից շատ քիչ տվյալներ են մեզ հասել: Ծնվել է 1618 թ. փետրվարին. «Ի թուականութեան ՌԿԷ. (1618) փետրվարի ամսոյն Յակոբն եւ Սուգիասն են ծնեալ»[1]:

Հակոբ քահանա Կարնեցին եղել է Գեւորգ եւ Մանանա ծնողների կրտսեր որդին: Կարնեցու հայրը՝ Տեր Գեւորգն, իր հոր՝ Միրաքի մահվանից հետո մոր եւ եղբայրների հետ քրդերի եւ ջալալիների ասպատակությունների պատճառով Կարին քաղաք էր տեղափոխվել 4-րդ Հայքի Կեղի գյուղաքաղաքից. «Ի թուականութեան ՌԽԴ. (1595) Տէր Գէորգն Արզրում է եկել»[2]: Այնուհետեւ 1611 թ. Հակոբ Կարնեցու հայրը ժողովրդի ցանկությամբ ձեռնադրվել է քահանա: Որոշ ժամանակ անց Փիլիպոս Ա Կաթողիկոսի (1632-1655) հրամանով Տեր Գեւորգը նշանակվում է Էրզրում (Կարին) քաղաքի ավագ երեց[3]:

Տեր Գեւորգն ունենում է յոթ երեխա, բայց երկու տղաները եւ մեկ աղջիկը մահանում են: Մնում են Մելքոն, Հակոբ եւ Մաղաքիա եղբայրները եւ քույր Գուլինարը: Կարնեցու Մելքոն եւ Մաղաքիա եղբայրները զբաղվում են առեւտրով ու դառնում անվանի վաճառականներ. «Եւ մեծ որդին Մելքոնն եղեւ այր կատարեալ եւ խորհրդական իմաստուն եւ յոյժ վաճառական եւ անուանի քէրվանպաշի եւ խոճա, եւ Մաղաքիան ընդ նմա»[4]:

Երկար տարիներ Կարինի Սուրբ Աստվածածին եկեղեցում քահանայագործելուց հետո Տեր Գեւորգը մահանում է 1655 թ. հուլիսի 2-ին՝ իր ծննդյան օրը: Անդրադառնալով հոր մահվան թվականին՝ Կարնեցին գրում է. «Հանգաւ հայրն մեր, ի սոյն թուականի ՌՃ. եւ Դ.(1655), յուլիս ամսոյ Բ.(2), ի նոյն աւուր յորում ծնեալն էր եւ վախճանեցաւ, զի ինքն ի կենդանութեան իւրում ասէր հանապազ թէ՝ «ես յաւուր Ներսէսի տօնին եմ ծնեալ», ի նոյն օրն եւ էառ վախճան»[5]: Նույն տարում մահանում է նաեւ Կարնեցու Մելքոն եղբայրը[6], իսկ մայրը մահացել էր ավելի շուտ՝ 1633 թ.[7]:

1480 թ. գրված ձեռագիր Հայսմավուրքի հիշատակարանից, որի վերջին նորոգողը եղել է հենց ինքը՝ Կարնեցին, տեղեկանում ենք, որ վերջինս ամուսնացել է Հռիփսիմե անունով աղջկա հետ: Նրանք ունեցել են հինգ երեխա՝ երեք տղա եւ երկու աղջիկ. «Այլ եւ յիշեսջիք

---

1 «Մանր ժամանակագրություններ, ԺԳ-ԺԸ դդ.», կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, հ. Ա., Եր., 1951 (այսուհետ՝ **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա.), էջ 247:

2 Անդ, էջ 239:

3 Անդ, էջ 247-248:

4 Անդ, էջ 248:

5 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 249:

6 Անդ, էջ 243:

7 Անդ, էջ 248:

ի մաքրափայլ յաղօթս ձեր զվերջին ստացող, նորոգող սուրբ գրոցս գեղեցկաշէն մայրաքաղաքիս Արզրումայ, զանարժան տէր Հակոբս եւ զհայրն իմ՝ զաւագ երէց տէր Գէորգն, եւ զմայրն իմ՝ զՄանանայն, մամն իմ՝ զԳուլիեարն, եւ կողակիցն իմ՝ զՀռիփսիմէն, եւ նորաբողբոճ որդիքն մեր՝ զՄկրտիչ սարկաւագն, Սողոմոնն ու զՊլուզ Յովհաննէսն, զՇուշանն եւ Դըշիտ Խաթունն, եւ այլ արեանառու մերձաւորքն մեր»[8]:

Հակոբ Կարնեցու ուսման եւ կրթության մասին մեզ շատ քիչ տեղեկություններ են հայտնի: Հոր կենսագրականում, խոսելով իր եւ եղբայրների մասին, նա գրում է. «Եւ որդիք նորա զարգացան եւ եղեն յոյժ վարժ գրոց եւ եղանակաց տաղի եւ շարականի եւ հնազանդ հօրն իւրեանց, հլու եւ հպատակ ամենեցուն»[9]: Այնուհետեւ Կարնեցին նշում է, որ ինքը Տեր Գեւորգի աշակերտ Սուքիասի հետ գալիս է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ 1641 թ. Փիլիպոս Աղբակեցի Կաթողիկոսի ձեռամբ արժանանում քահանայական աստիճանի ու ստանում աստվածաբանական բարձր կրթություն՝ հմտանալով Հին եւ Նոր Կտակարանների իմացության մեջ. «Եւ եղեն նոքա այր կատարեալ ի կրթութիւնս աստուածային գրոց հին եւ նոր կտակարանաց»[10]: Վերադառնալով՝ արդեն որպես քահանաներ ծառայության են անցնում Տեր Գեւորգի մոտ[11]: Իր «Շինուած Կարնոյ քաղաքին...» աշխատության մեջ Հակոբ Կարնեցին երախտագիտությամբ նշում է, որ հետեւել է նաեւ Սսի Մինաս (մականվամբ՝ Քացախ) Կաթողիկոսի դասերին. «Տեսաք աչօք մերովք եւ լուաք զդաս եւ քարոզութիւն նորա ի քաղաքս Արզրում»[12]: Անդրադառնալով Հակոբ Կարնեցու ստացած կրթությանը՝ Կ. Կոստանյանցը նշում է, որ նա ծանոթ է եղել հայ մատենագիրների երկերին, ինչպես նաեւ Հայաստանի աշխարհագրությանը[13]: ԺԷ դարի ձեռագիր հիշատակարաններից մեկում ըստ Վ. Հակոբյանի երեւում է, որ Հակոբ Կարնեցին եղել է նաեւ Երուսաղեմում. «Ի թուին ՌՃ.(1651) գնացեալ Երուսաղէմ, տեսաք որ Քրիստոսի Ծննդեան դուռն այս էր գրած. «Թուին ՋՃՆԶ.(1227) կազմեցաւ դուռն Ս. Աստուածածնիս, ձեռամբ Տէր Աբրահամու եւ Տէր Առաքելի, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, որդի Կոստանդէ. Քրիստոս Աստուած ողորմեսցի աշխատողացս»[14]: Որ վերոհիշյալ անձը Հակոբ Կարնեցին է, երեւում է նաեւ մեկ այլ տեղում, որտեղ վերջինս հիշատակվում է իբրեւ մահտեսի, այսինքն՝ Երուսաղեմ այցելած. «...եւ զանազան ծաղկով զարդարեաց զսա մահդասի Տէր Յակոբն»[15]:

Հակոբ Կարնեցու հետագա կյանքի եւ գործունեության վերաբերյալ աղբյուրները փալիս են կցկտուր տեղեկություններ: Վերջին տեղեկությունն այն է, որ նա 1662 թ. Կարինի վանքերից մեկում եղել է իբրեւ պաշտոնակատար քահանա[16]:

Թե երբ եւ որտեղ է մահացել Հակոբ քահանա Կարնեցին, մեզ հայտնի չէ: Միայն իր «Ժամանակագրության» մեջ հանդիպում ենք մի փաստի, ըստ որի Հակոբ Ջուղայեցի Կա-

---

8 «Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ» (1641-1660), հ. Գ., Կազմեցին՝ **Վազգեն Հակոբյան, Աշոտ Հովհաննիսյան,** Եր., 1984 (այսուհետ՝ «ԺԷ դարի հիշատակարաններ»), էջ 466:

9 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 248:

10 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 248:

11 Անդ:

12 «Մանր Ժամանակագրություններ, ԺԳ–ԺԸ դդ.», կազմեց՝ **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ, Եր., 1956 (այսուհետ՝ **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ), էջ 542:

13 **Հ. Կարնեցի,** էջ 7:

14 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 444:

15 «ԺԷ դարի հիշատակարաններ», էջ 665:

16 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ, էջ 542:

թողիկոսը 1672 թ. Կ. Պոլսից վերադառնում է Սուրբ Էջմիածին: Ելնելով այս ամենից՝ կարող ենք ասել, որ Կարնեցին 1672 թ. դեռ կենդանի է եղել, եւ նրա մահը կարող է եղած լինել միայն այդ թվականից հետո:

Հակոբ քահանա Կարնեցին թեեւ չի ունեցել հարուստ ու բեղմնավոր գրական գործունեություն, այնուամենայնիվ նրանից մեզ հասած մի քանի աշխատանքներն իրենց կարեւորությամբ համալրում են հայ մատենագրական ժառանգությունը: Վ. Հակոբյանը, անդրադառնալով Կարնեցու թողած գրական ժառանգությանը, նրան է վերագրում հետեւյալ խոշոր գրները կրող աշխատությունները[17].

ա. «Շինուած Կարնոյ քաղաքին...»

բ . «Հօր Գէորգ քահանայի կենսագրութիւնը»

գ. «Ժամանակագրութիւնը»[18]

դ. «Էջմիածնի Կաթողիկոսների աթոռակալութեան մի ցանկ»:

ա. Աշխատության ամբողջական վերնագիրը, որ գրել է Հակոբ Կարնեցին, հետեւյալն է. «Շինուած Կարնոյ քաղաքին, որ կոչեցաւ Թէոդուպօլիս որ այժմ Արզրում վերաձայնեալ կոչի»: Կարնեցու այս աշխատանքը քննական բնագրով հրատարակել է Վ. Հակոբյանը[19]: Այս երկը հրատարակվել է նաեւ Կ. Կոստանյանցի աշխատասիրությամբ՝ «Տեղագիր Վերին Հայոց» խորագրով: Այն իր բովանդակությամբ թեեւ պատմական երկերի թվին չի դասվում, սակայն պարունակում է պատմական որոշ ճշգրիտ դրվագներ, որոնք վերաբերում են Օսմանյան Թուրքիայի վարած ավերիչ ասպատակություններին ու պատերազմներին: Աշխատության հիմնական շարադրանքը նվիրված է Բարձր Հայքի նկարագրությանը: Հեղինակն այստեղ հանգամանալից խոսում է ԺԷ դարում Կարին նահանգի կազմում գտնվող 23 գավառների մասին, առանձին-առանձին նկարագրում դրանցից յուրաքանչյուրի բնական հարստություններն ու տնտեսական վիճակը: Լինելով Կարին քաղաքից՝ հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է Թուրքիայի տիրապետության տակ ընկած հայ ժողովրդի քաղաքական ու տնտեսական վիճակին, թուրք փաշաների իշխանությանն ու լիազորությանը, տեղական ու կենտրոնական մարմինների փոխհարաբերությանը: Խոսելով գյուղերի մասին՝ նշում է, որ դրանք հարուստ էին անասուններով, դաշտերը՝ հացահատիկներով ու պտղատու այգիներով: Անդրադառնալով հայ վաճառականների արդյունավետ գործունեությանը՝ Կարնեցին տալիս է հետեւյալ նկարագրությունը. «Եւ ի վաճառականացն ի Դ-(4) կողմանց ազգէս Հայոց անթիւ կան նստեալ տարին բոլոր բովանդակ ի գնել եւ ի ծախել՝ ի փառչայ եւ ապրշում. ցեղ ու ցեղ դումաշ եւ դանաւուզ չուխայ, կտաւեղէն եւ եայդուրն, լայ եւ զմրութն, սամուր եւ վարշաղ եւ ամենայն մազեղէն ի բոլոր տարին յայտնի գնեն եւ վաճառեն...»[20]: Ի հակադրություն այս ամենի՝ հայ աշխատավոր ժողովուրդը մշտապես կեղեքվում էր հարկային ծանր քաղաքականությունից, որը Հակոբ Կարնեցին բնորոշում է այսպես. «Զի ցեղ ու ցեղ եւ ազգի-ազգի սուտ պատճառաւս հարկապահանջութիւնն եւ կեղեքելն անասելի է եւ անպատմելի եւ անողորմ տուգան առնուլն ի քրիստոնէից...»[21]:

17 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 237:

18 Թեեւ Վ. Հակոբյանը միայն երեք աշխատություններ է նշում, այնուամենայնիվ, իր հետագա շարադրանքում (տե՛ս **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա., էջ 237-238) Հակոբ Կարնեցու գրչին է վերագրում նաեւ «Ժամանակագրութիւնը», ուստի մենք այն ներկայացնում ենք իբրեւ առանձին միավոր:

19 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ., էջ 548-582:

20 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Բ., էջ 568:

21 Անդ, էջ 563:

Հակոբ Կարնեցին իր այս աշխատանքը գրել է 1668 թ. Կարին քաղաքում. «Գրեցաւ պատմութիւնս ի քաղաքիս Արզրում ձեռամբ բազմամեղ Յակոբայ ի թուականիս մերոյ ՌՃԺԷ(1668)»[22]:

Կ. Կոստանյանցն իր հրատարակության մեջ այս երկին է կցել Կարինի Սուրբ Աստվածածին եկեղեցու վերաբերյալ պատմություն, որը նրա կարծիքով «Շինուած Կարնոյ քաղաքին...» աշխատության անբաժան մասն է: Սակայն երկի վերջաբանից հստակ երևում է, որ այն ոչ թե աշխատության մի մասն է, այլ առանձին մի պատմություն՝ նվիրված Սուրբ Աստվածածին եկեղեցուն. «Բայց գիտեմ, զի պատմութիւնս պարսաւելի է իմաստնոց. բայց խնդրեմ ազատ առնել զմեզ ի բամբասանաց եւ կամ զթերին լրնուլ. քանզի յոյժ խնդրեաց հարազատ եղբայրն իմ Մաղաքիայ, եւ քահանայքն եւ սարկաւարգունքն մեր յոյժ թախանձեցին, եւ ես խնդիրս նոցա կատարեցի բարեխօսութեամբ սուրբ կուսին Տալիթայ, եւ Ամլորդոյն. նաեւ Լուսատուին մերոյ եւ ամենայն սրբոցն ամէն»[23]:

Այն, որ Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմությունը առանձին աշխատանք է, երևում է նաև հետևյալ մեջբերումից. «Բայց ի մէջ եղբարցն քահանայական դասուցն ես միայն էի զառաձեալ մեղօք տէր Գէորգի որդի Յակոբս, որ զայս փոքրիկ պատմութիւնս արարեալ գրեցի ի զգուշութիւն ապագայիցն եղբարցն մերոց»[24]:

Վերոհիշյալ փաստարկներից կարող ենք հաստատապես ասել, որ Սուրբ Աստվածածին եկեղեցու պատմությունը մի փոքր աշխատանք է, որի նյութը Սուրբ Աստվածածին եկեղեցու սպասքների կողոպուտի պատմությունն է, որ կատարվել է թուրքերի ձեռքով 1653 թ.: Սակայն որոշ ժամանակ հետո թուրք Մուրթաղա փաշայի շնորհիվ գողերը ձերբակալվում եւ արժանի պատիժ են ստանում, իսկ եկեղեցու գողացված սպասքներն ու անոթները վերադարձվում են. «Յայսմ ամի առագակք մտան եկեղեցին եւ գողացան անօթն ամենեքեան, յետոյ զօրութեամբ սբ. եկեղեցոյ, Մուրթաղա փաշան գտաւ զգողեր, զամենեքեան չարաչար մահուամբ կորոյս եւ անօթն զամէն առ մեզ եդուր»[25]: Իսկ Կոստանյանցը նշում է, որ ամեն դեպքում եկեղեցու սպասքներից մեկ Ավետարան ու մի խաչ կորչում են[26]:

բ. «Պատմութիւն վասն հօրն մերում Գէորգա քահանային է, թէ որպէս է եկեալ ի Թէոդուպօլիսս եւ կամ, ո՛ր յերկրէ է եղեալ, ճառեցից քեզ կարգաւ, եղբայր Մաղաքիա եւ որդիք մեր՝ Մկրտիչ, Սողոմոն եւ Պլուզ Յովհաննէս եւ ազգականք մեր»:

Այստեղ Հակոբ Կարնեցին շարադրում է իր հոր՝ Գեւորգ քահանայի կենսագրությունը: Բացի կենսագրական հետաքրքիր տվյալներից, աշխատանքը պարունակում է ուշագրավ որոշ տեղեկություններ ջալալիների եւ քուրդ հրոսակների կատարած ասպատակությունների, 1606 թ. տեղի ունեցած մեծ սովի եւ այլ կարեւոր դեպքերի մասին: Աշխատանքի վերնագրից երևում է, որ Կարնեցին այն գրել է եղբայր Մաղաքիայի, իր որդիների եւ ազգականների խնդրանքով[27]:

գ. Հակոբ Կարնեցու «Ժամանակագրութիւնը» սկսվում է 1482 թ. դեպքերի շարադրը-

22 Անդ, էջ 584:
23 **Յակոբ Կարնեցի** , էջ 53:
24 Անդ, էջ 60:
25 «ԺԷ դարի հիշատակարաններ», էջ 575:
26 **Յակոբ Կարնեցի**, էջ 58:
27 **Վ. Ա. Հակոբյան,** հ. Ա, էջ 245-246:

մամբ եւ հասնում մինչեւ 1672 թ., երբ Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսը Կ. Պոլսից վերադառնում է Սուրբ Էջմիածին[28]: «Ժամանակագրութիւնը» ընթերցողին հնարավորություն է տալիս հստակեցնելու տվյալ ժամանակաշրջանին բնորոշ որոշ թյուր կարծիքներ, ինչպես նաեւ կարեւոր տեղեկություններ է պարունակում արեւմտահայության ներքին կյանքի, կառավարման արատավոր բարքերի, Մովսես Տաթեւացի, Փիլիպպոս Աղբակեցի ու Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսների գործունեության մասին:

դ. Կարնեցու աշխատությամբ մեզ է հասել նաեւ Էջմիածնի Կաթողիկոսների գահակալության մի ցանկ, որը սկսվում է Բարսեղ Անեցի Կաթողիկոսի մահվան (1113 թ.) հանգամանքների մանրամասն շարադրմամբ եւ հասնում մինչեւ Հակոբ Ջուղայեցի Կաթողիկոսի ժամանակները[29]:

Հրաչյա Աճառյանը Հակոբ Կարնեցուն է վերագրում նաեւ «Երգ երգոցի» մի մեկնություն, որը հրատարակել է Հայր Համազասպ Ոսկյանը. բնագիրը պահվում է Վիեննայի Մխիթարյան ձեռագրատանը[30]: Սակայն այստեղ առկա է փոքր անճշտություն, որի համար բերում ենք հետեւյալ փաստարկները.

1. Հ. Ոսկյանի հրատարակած «Երգ երգոց»-ի մեկնության մեջ նշված է. «Հաւաքեալ եւ մեկնեալ ի Յակոբայ վարդապետէ Կարնեցւոյ...»[31]: Այստեղ Հակոբ Կարնեցին դիտվում է իբրեւ վարդապետ, սակայն նրա կենսագրականում հստակ նշվում է, որ եղել է ոչ թե վարդապետ, այլ քահանա: Ուստի մենք այստեղ ցանկանում ենք տարբերակել երկու անձերին, մանավանդ որ, ինչպես կտեսնենք ստորեւ, առկա է նաեւ ժամանակային անհամաձայնություն:

2. Նույն գրքի շարունակության մեջ կարդում ենք. «Ի գերապայծառ հայրապետության Տէր Ղուկասու սրբազան Կաթողիկոսի եւ գերերջանիկ ծայրագոյն պատրիարքի ամենայն Հայոց»[32]: Հայտնի է, որ Ղուկաս Ա Կարնեցի Կաթողիկոսը գահակալել է 1780-1799 թթ., հետեւապես անհնար է, որ Հակոբ Կարնեցին այդ ժամանակ ողջ եղած լիներ:

3. Այստեղ հանդիպում ենք մեկ այլ փաստի եւս, ուր երեւում է նաեւ մեկնության գրվելու ճշգրիտ թվականը. «Ի թուականութեան Արամյանս տոհմի ի 1231: Ի սեպտեմբերի ամսոյ»[33]: Արամյան տոհմի 1231 թ. համընկնում է փրկչական 1782 թ., ուստի հաստատապես կարող ենք ասել, որ այս մեկնությունը Հակոբ Կարնեցուն չի պատկանում:

Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ Հակոբ Կարնեցին երիտասարդ հասակում զբաղվել է նաեւ ձեռագրեր ընդօրինակելով, որի մասին նա գրում է. «Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զՏէր Գէորգի որդի զտէր Յակոբն որ եւ աւագ երէց սուրբ եկեղեցւոյս, որ եղեւ պատճառ սուրբ Գրոցս նորոգման, եւ զերեք տեարս մագաղաթն եւտուր յիշատակ իւր եւ ծնողացն իւրոց: Նորոգեցաւ ձեռամբ մահտէսի Տէր Յակոբին. ի թուին հազար հարիւր եւ տասնուվեցին ի մայրաքաղաքս Արզրում ի դուռն միաբան Սուրբ Աստուածածնի»[34]:

---

28 Անդ, էջ 237-238:

29 Անդ, էջ 237:

30 **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Եր., 1946, էջ 511:

31 **Համազասպ Ոսկեան,** «Երգ երգոցի» Ա եւ Բ թարգմանութիւն, Վիեննա, 1924, էջ 4:

32 Անդ:

33 Անդ:

34 **Յակոբ ծ. վ. Քօսեան,** Բարձր Հայք, Կարին քաղաքը, հ. Ա., Վիեննա, 1925, էջ 178: